



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՅ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Դարձվածքների իմաստային և ոճական կիրառությունը

Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպում

ԱՌԱՐԿԱ՝ Հայոց լեզու

ՀԵՂԻՆԱԿ՝ Կարինե Զավադյան

ՄԱՐԶ՝ Երևան

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Գ.Գյուլբենկյանի անվան

հ.190 ավագ դպրոց

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
--------------------	---

ԳԼՈՒԽ 1

Դարձվածքը ժողովրդի լեզվամտածողության դրսևորման միջոց.....	4
1.1. Դարձվածքների դրսևորումները Մուրացանի «Գևորգ Մարգպետունի» վեպում. դարձվածքներն ըստ ծագման.....	5
1.2. Դարձվածքներն ըստ խոսքի երանգավորման.....	8

ԳԼՈՒԽ 2

2.1. Հոմանիշ և հականիշ դարձվածքներ.....	9
2.2. Պատկերավորումը դարձվածքներում.....	12
Եզրակացություն.....	19
Գրականություն.....	20

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Գեղարվեստական գրականության ընթերցումը և ուսումնասիրությունը լեզվի յուրացման անփոխարինելի միջոց են, ուստի գրական բնագրերի շրջանակներում լեզվական երևույթների ու հասկացությունների, այս դեպքում՝ դարձվածքների ուսուցանումը ուսումնահետազոտական գործունեություն կազմակերպելու ճանապարհով խիստ **արդիական** է և նպաստում է սովորողների լեզվաոճական հմտությունների զարգացմանը, ստեղծագործական ունակությունների խթանմանը, աշխարհայացքի և ճանաչողության ընդլայնմանը, այսինքն՝ կարողունակությունների զարգացմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.Քննության առնել դարձվածքների իմաստային և ոճական դերը Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպում՝ փորձելով ցույց տալ դրանց իմաստային կիրառության նրբերանգներն ու ոճական առանձնահատկությունները:

2.Զարգացնել սովորողների՝ գրական երկը ընթերցելու, լեզվաոճական առանձնահատկությունների վերլուծություն կատարելու կարողությունները և հմտությունները:

3.Զարգացնել սովորողների՝ դարձվածքները խոսքում կիրառելու և արժևորելու, ինչպես նաև պատկերավոր խոսք կառուցելու հմտությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.Ուսումնասիրել և բացահայտել, թե Մուրացանը դարձվածքների ինչ տեսակներ է կիրառել վեպում:

2. Բացահայտել, թե գրողի կիրառած դարձվածքները որքանով են վեպին հաղորդել պատկերավորություն, և արժևորել հերոսների խոսքն ու վերաբերմունքը ազգային լեզվամտածողության, միաբանության ու հայրենապաշտության վերաբերյալ:

3. Զարգացնել սովորողների պատկերավոր մտածողությունը :

Դարձվածքը ժողովրդի լեզվամտածողության դրսևորման միջոց

Մարդու մտածողության ու կենսափորձի զարգացման ավելի բարձր մակարդակում, երբ մարդն ի վիճակի է եղել վերացարկում կատարելու, իր մտքերն ավելի տպավորիչ ու դիպուկ դարձնելու համար կազմել է այնպիսի բառագուգորդումներ՝ վերախմաստավորված կայուն բառակապակցություններ, որտեղ բառակապակցության բաղադրիչները հանդես են գալիս իրենց ոչ սովորական՝ փոխաբերական իմաստով:

Դարձվածքը լեզվի մեջ հենց այնպես չի ստեղծվում. նրա ստեղծման համար անկասկած հիմք և նախադրյալներ են անհրաժեշտ: Ամեն մի դարձվածք առնչվում է այդ լեզուն կրող ժողովրդին ու նրա մտածողությանը և հիմնականում հարազատ է այդ ազգին: Այս առումով Պ. Բեդիրյանը վկայակոչում է ֆրանսիական «Լարուս» ամենամյա հայտնի բառարանը, որտեղ դարձվածքը սահմանվում է որպես «Մի ազգի հատուկ լեզվական միավոր», «իբրև մի արտահայտություն կամ կառույց, որ հատուկ է մի լեզվի¹»:

Ի տարբերություն սովորական բառակապակցությունների՝ դարձվածք կազմող բաղադրիչներն իրենց սովորական իմաստներով հանդես չեն գալիս, այլ կապակցության մեջ ձեռք են բերում փոխաբերական իմաստներ, այսինքն՝ ամբողջ կառույցի իմաստը ոչ թե բխում է նրա բաղադրիչների իմաստների գումարից, այլ այն բոլորովին նոր իմաստ է ձեռք բերում: Օրինակ՝ **ծոցում օձ տաքացնել** բառակապակցությունը նշանա կում է մեկին պահել, հովանավորել՝ չիմանալով, որ նա իր թշնամին է: Ըստ Մ. Աբեղյանի՝ մենք գործ ունենք վերախմաստավորված կայուն բառակապակցության՝ դարձվածքի հետ:

¹ Տե՛ս Խ. Բաղիկյան «Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները», Երևան, 1986, էջ 51

Գլուխ 1.1 Դարձվածքների դրսևորումները Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» վեպում.

դարձվածքներն ըստ ծագման

Հայ գեղարվեստական խոսքը, առավելապես արձակը, հարուստ է թարմ ու ինքնատիպ, գեղեցիկ ու պատկերավոր դարձվածքներով, որոնք, կարելի է ասել, գեղարվեստական երկի ժողովրդայնությունն ապահովող լեզվական անգերազանցելի միջոցներ են: Դարձվածքների լավագույն շտեմարան է Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» պատմավեպը:

«Գևորգ Մարգալետունի» երկում մեծ թիվ են կազմում դարձվածքները, որոնց մեջ պարզորոշ դրսևորվում է ժողովրդի լեզվամտածողությունը: Դարձվածքների առատ գործածության մեջ, անշուշտ, իր նշանակությունն է ունեցել հեղինակի ընտրած թեման: Ինչպես հայտնի է, տարբեր սերում ունեցող դարձվածքները խոսքը ոճավորում են տարբեր առումներով²: Մենք կատարել ենք մեր ուսումնասիրությունը՝ հաշվի առնելով նաև վեպում գործածված դարձվածքների ծագումը:

Ա) Ժողովրդական ծագում ունեցողներ (դարձվածքների գերակշռող մասը). թե՛ հեղինակի խոսքին և թե՛ հերոսների խոսքին հաղորդում են **ժողովրդային երանգ**: **Սիրտը բանալ** (այստեղ՝ անկեղծանալ, իր նվիրական գաղտնիքները, զգացմունքները, ապրումները հաղորդել մեկին):

«Իսկ ա՛յժմ... այժմ նա (թագուհին) որոնում է մինչև անգամ մեկը, որին կարողանար յուր **սիրտը բանալ**, յուր վշտերը պատմել»³: «Այժմ ես կարոտում եմ մի հավատարիմ բարեկամի, որին **սիրտս բանալ** կարողանամ...ես արդեն հոգնել, թուլացել եմ իմ վշտերս միայնակ տանելուց»⁴:

Առաջն առնել (արգելել, խափանել): «...երբ մարդ չէ կարող յուր դժբախտության **առաջն առնել**, ապա լավ է, որ նա երբեք այդ դժբախտությունը չիմանա և կյանքը իզուր չդառնացնե՞»:

Արևը սարի հետևն անցնել (արևի մայր մտնելու պահը, երեկոյանալը):

-Վաղո՞ւց ես դու այստեղ,- ընդհատեց նրան թագուհին:

-Հենց որ **արևը սարի հետևն անցավ**⁶:

Շունչ առնել (հանգիստ, ապահով զգալ): «Նորեն խաղաղություն տիրեց. Ժողովուրդը

² Յուրի Ավետիսյան «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Գիրք Բ, Երևան, 2015, էջ 34,35

³ Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս»1989, էջ 5

⁴ Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս»1989, էջ 19

⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս»1989, էջ 6

շունչ առավ, և շինականն ու քաղաքացին սկսան իրանց առտնին գործերով զբաղիլ⁷:

Շունչը բռնած (լարված, սպասողական վիճակում): «Բոլոր ժողովուրդը **շունչը բռնած** նրան (թագավորին) էր հետևում, բոլորը մի աչք դարձած նրան էին նայում ⁸»:

Համարձակություն առնել (համարձակվել, հանդգնել): «Թագուհու լուրջ ու անթարթ հայացքը հետզհետե մեղմացավ: Մեղան **համարձակություն առավ** խոսելու⁹»:

Քաղցր աչքով է նայել (բարեհաճ, բարյացակամ լինել): «Բայց աստված, որ **քաղցր աչքով է նայում** մեզ վրա, ահա մատնել է նրան մեր ձեռք. եթե մենք այժմ չկուրացնենք նրան (Բերին), հետո նա ինքը կկուրացնե մեզ...¹⁰»:

Բ) Գրական-գրքային ծագում ունեցող. սովորաբար գործածվում են գրավոր խոսքում, դրա պաշտոնական և գիտական տարբերակներում՝ խոսքին տալով հանդիսավորություն, որոշ վերամբարձություն: Օր՝. **Ղափնիներով պսակել** (մեկին փառք ու պատիվ տալ, հաղթողին մեծարել՝ փառավորել): «Քեզ **ղափնիներով պիտի պսակեն** և հաղթական կամար կանգնեցնեն ամեն տեղ¹¹»:

Գ) Որպես գնահատման արտահայտչական միջոց գործածվողներ: Ունեն ոչ այնքան անվանողական, որքան գնահատողական դեր: Առհասարակ գնահատողականությունը դարձվածքների մեծ մասի իմաստային կառուցվածքի հիմնական հատկանիշն է: Փոխաբերական իմաստի շնորհիվ գնահատողական երանգը ավելի է ընդգծվում, շեշտվում: Օրինակ՝

Անցրել ես տարիքդ (տարիքի մեջ առաջանալ, ծերանալ): «Դրա համար դու արդեն **անցրել ես տարիքդ**, մա՛յր Սեդա, ո՞ւր են իմ նաժիշտները,- հարցրեց թագուհին մեղմությամբ¹²»:

Բաժակը լցվել (համբերությունը հատնել, այլևս չկարողանալ համբերել)... «Այո՛, տե՛ր Մարգարետունի, ուրիշ կերպ վարվել չէի կարող. անիծի՛ր ինձ, եթե կամենում ես, բայց գիտցի՛ր, որ երբ **բաժակը լցվում է**, այն ժամանակ այլևս անկարելի է ավելացնել նրա վրա ուրիշ մի քանի կաթիլ և պահանջել, որ նա չթափվի...¹³»:

Խաղալիք լինել բնության ձեռքում (ճակատագրորեն նախասահմանված, կանխորոշված բնական հակում, մղում, որի դեմ անգոր է մահկանացուն): «Մենք, սիրելի՛ բարեկամ, թշվառ **խաղալիքներ ենք բնության** հզոր **ձեռքում**... իզուր են մարդիկ

⁷ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 248

⁸ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 29

⁹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 7

¹⁰ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 349

¹¹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 249

¹² Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 8

¹³ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 94

օրենքներ դնում և կարգեր սահմանում՝ կառավարելու համար այն, ինչ որ ինքը բությունը պիտի կառավարե և որի միահեծան տիրապետն է...մարդկային սրտերի մասին է խոսք...¹⁴»:

Դ) Խոսքը մեղմացնելու համար գործածվողներ: Իրավիճակներ կան, երբ ուղիղ խոսքը կարող է հնչել ոչ տեղին, անբարեկիրթ: Դարձվածքային փոխաբերական առումը մեղմում է խոսքի այդ երանգը՝ ընդ որում ավելի հարստացնելով խոսքը: Օր.՝ **հոգին ավանդել** (մահկանացուն կնքել): «Մի քանի օրից հետո «Հայրենիքի բարերարը» յուր արդար **հոգին ավանդեց**¹⁵»:

Ե) Որպես պատրաստի համեմատություններ գործածվողներ: Առհասարակ դարձվածքային միավորների մեծ մասը կառուցված է երևույթների փոխաբերական համեմատությունների հիմքով:

Այդ համեմատություն-հակադրության մեջ առավել տեսանելի են դառնում պատկերներն ու երևույթները: Օր.՝ **Երկինքը կարծես երկրի վրա իջավ, կամ ես վերնային գավառները բարձրացա** (անսահման երջանիկ լինել, երանության մեջ հայտնվել):

«Ինչ էի զգում ես այդ վայրկյանին՝ չեմ կարող բառերով արտահայտել. **երկինքը կարծես երկրի վրա իջավ, կամ թե ես վերնային գավառները բարձրացա**¹⁶»:

Չ) Աստվածաշնչյան դարձվածքներ: Աստվածաշնչի միջոցով մեծ թվով դարձվածքներ են փոխանցվել գրական լեզվին նաև մեծանուն գրողի շնորհիվ: Դրանք գործածվում են կոնկրետ հանգամանքները, իրավիճակները հակիրճ ու դիպուկ բնութագրելու ոճական նպատակով: Օրինակ՝

Ունայնություն ունայնությանց (ամեն ինչ դատարկ է, փուչ):

«Այո՛, երջանիկ օրեր էին...և անցան: Բայց ի՞նչը չէ անցնում այս աշխարհում... **Ունայնություն ունայնությանց**. ամեն ինչ ընդունայն է,-ասել է Սողոմոնը¹⁷»:

Ակն ընդ ական, ատամն ընդ ատաման (վրեժխնդիր լինել, չարությանը չարությամբ հատուցել): «Քրիստոսի պատվերը կատարում են միայն նրանք, որոնք զրկանք չեն կրել ապերախտ ընկերից կամ եթե կրել են, չեն կարողանում **«ակն ընդ ական, ատամն ընդ ատաման»** փոխարինել: Բայց նրանք, որոնք ուժ ունին փոխարինելու, փոխարինում են զրկանքը. և այդ ավելի բնական է, քան քրիստոնե աբար ներելը¹⁸»:

¹⁴ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 211

¹⁵ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 355

¹⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 43

¹⁷ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 26

¹⁸ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 94

Չարիքը արմատից խլել (անհաջողության, ձախորդության, չարության հիմնական պատճառը հիմնավորապես վերացնել): «Դրա (ապստամբության) դեմ, այո՛, պետք է գործել եռանդով. Բայց կարևոր է նաև այս գաղտնիքը լուծել, որպեսզի **չարիքը կարողանանք արմատից խլել**¹⁹»:

Գայթակղության քար (գայթակղության՝ հրապուրվելու առարկա, գայթակղության պատճառ): «Իմ և քո թագավորը, բարեկա՛մ ...: Ես պետք է միանգամայն վերցնեի նրան աշխարհի երեսից. այդպիսով **գայթակղության քարը** վերցված կլինե մեջտեղից²⁰»:

1.2 Դարձվածքներն ըստ խոսքի երանգավորման

Վիպասանի գործածած դարձվածաբանական համակարգում մի առանձին խումբ են կազմում այնպիսի դարձվածային միավորները, որոնք արտահայտում են խոսողի իմացական կամ գնահատողական վերաբերմունքը: Խոսքը **եղանակավորող դարձվածքների** մասին է, որոնք երանգավորում են խոսքը, ասելիքը: Սրանց միջոցով խոսողը խոսքի նկատմամբ արտահայտում է տարբեր վերաբերմունքներ: Օրինակ՝ «փա՛ռք Աստծո» (**գոհունակություն**). «Փա՛ռք ամենակարող **աստծուն**, որ հաջողում է մեզ...,- բացականչեց իշխանը...», «Աստված քեզ հետ» (**բարեմաղթություն**), «Աստված մի՛ արասցե» (**Աստված չանի, երանի այդպես չլինի**), «Խաչը վկա» (**երդում**), «Այ քեզ բան» (**զարմանք**), «Դժոխքը տանե նրան» (**անեծք**):

«Դու մի օր թագավորի բարեկամն էիր և դարձյալ բարեկամ կլինիս ...

- Բարեկա՛մ... **դժոխքը տանե նրան...** Իմ սատանային հաշտության ձեռք կպարզեմ, բայց նրան՝ երբեք,- ուժգին բացականչությամբ ընդհատեց սեպուհն իշխանին²¹»:

–**Դժոխքի որդի՛ք** (նախատական արտահայտություն, ստոր, սրիկա , չարագործ, հրեշ, դև), ի՞նչ եք անում,- գոչեց նա գայրագին և սկսավ հարվածել հոր հակառակորդներին²²:

Այսպիսով՝ հաղորդակցական դարձվածները, ըստ իրենց գործառության ոլորտների, դատողություններ են անձերի, առարկաների, երևույթների ու նրանց հատկանիշների վերաբերյալ

¹⁹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 73

²⁰ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 84

²² Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 305

Գլուխ 2

2.1 Հոմանիշ և հականիշ դարձվածքներ

Ըստ իրենց ձևախմաստային փոխհարաբերության՝ առանձնացրել ենք վեպում տեղ գտած բազմիմաստ դարձվածքները, որոնք, լինելով բառային միավորներ, ունեն իրենց հոմանիշներն ու հականիշները:

Հոմանիշ դարձվածքներ

Մի ծաղկով գարուն չի գալ (մեծ գործերը մի մարդ չի կարող կատարել) // **մի ձեռքը ծափ չի տալ** (մենակ կամ քիչ մարդկանցով մեծ գործը գլուխ չի գա)... Էլ ուրիշ ի՞նչ ասեմ. Մենք միայնակ ենք. **«Մի ձեռքը ծափ չի տալ», «Մի ծաղկով գարուն չի գալ»²³**:

Սուրբ մերկացնել/սուր կախել գլխին/սուրբ պատյանից հանել (սուր բարձրացնել, կովի դուրս գալ, պատերազմ հայտարարել): **«Մի՛ վախենար, Վեհափա՛ռ հայր. ես թույլ չեմ տալ, որ ոստիկանը յուր սուրբ մերկացնե , ուր մնաց թե կախե քո գլխին»²⁴**:

Միրտը կտոր-կտոր լինել (ցավից, վշտից մորմոքել, ողբերգություն ապրել)//**Միրտը մաշվել** (վշտերով, հոգսերով տառապել): **«Ի՞նչ ես ասում, թագուհի՛, ինչպե՞ս կարելի էր իսկությունը քեզ հայտնել.սիրտդ կտոր-կտոր կլինե՞ր»²⁵**: **«Սովը...սաքսափելի սովը...: Օ՛, սիրտս մաշվեցավ, Մեղա՛, բավական է սովի մասին խոսել...»²⁶**:

Միրտը գերել/Միրտը գրավել (սիրահարեցնել իրեն): **«Եթե Սահանույշը այստեղ լիներ, անկարելի է , որ այս քաջը (արքայորդին) նրա սիրտը չգերեր»²⁷**:

Դժոխքը տանե նրան/դժոխքի բաժին դառնա (չարաչար տանջանքների ենթարկվի)²⁸:

Սրի ճարակ դառնալ //սրի քաշվել (սպանվել, կոտորվել, ոչնչացվել): **«Ժողովրդի մի մասը դուրս փախավ եկեղեցուց, մի մասը տեղն ու տեղը սրի ճարակ դարձավ...»²⁹**

Երես դարձնել (անտես անել, արհամարհել, անուշադրության, մոռացության մատնել)//**Ճակատագրի հարվածները արհամարհել** (բանի տեղ չդնել, կարևորություն չտալ, հաշվի չառնել ճակատագրորեն նախասահմանվածը): վարմունքը³⁰:**«Նստի՛ր այստեղ,**

Բորբոքել վրեժխնդրության անշիջանելի բոցը (մղել վրեժխնդրության)³¹://**թշնա մության կրակը վառել** (թշնամացնել, ռիսերիմ հակառակորդներ դարձնել):

²³ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 95

²⁴ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 254

²⁵ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 48

²⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 49

²⁷ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 30

²⁸ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 106

²⁹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 193

³⁰ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 209

³¹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս»1989, էջ 91

«Հրավիրեցի ինձ մոտ Յիկ Ամրամին, հայտնեցի նրան յուր կնոջ և թագավորի՝ միմյանց հետ ունեցած սիրահարական գաղտնիքները, վառեցի, բորբոքեցի նրա սրտում թունա վոր նախանձի, թշնամության ու վրեժխնդրության անշիջանելի բոցը, ապստամբեցրի նրան անօրեն թագավորի դեմ. միացա նրա հետ և ես: «Ես իմ որդիներին կհամոզեմ և կվերադարձնեմ իրանց գորքերով, բայց Յիկ Ամրամին համոզել չեմ կարող, որովհետև ինքս եմ թշնամության կրակը վառել նրա սրտում. այժմ ինչպե՞ս հակառակ խորհուրդ տամ նրան³²»:

Հոգին ավանդել (մեռնել, վախճանվել)//**աշխարհից հեռանալ** (մահանալ, մահկանա ցուն կնքել)//**հրաժեշտ տալ աշխարհին** (մահանալ)//**աշխարհից բաժանվիլ** (վախճան վել, մահանալ): «Մի քանի օր հետո «Հայրենիքի բարերարը» յուր արդար հոգին ավան դեց³³»: «Բայց իմ օրերը հաշված են, սիրելի՛ Աբաս, ես պիտի հեռանամ աշխարհից ³⁴»:

«Սակայն բժիշկը, թագուհու համաձայնությամբ, խորհուրդ տվավ արքային շտապել, տնօրինել յուր վերջին կամքը պետական գործերի նկատմամբ և պատրաստվել հրաժեշտ տալ աշխարհին, որովհետև յուր հիվանդությունը սուր կերպարանք էր առնում³⁵»: «Դա այն ... հույսն է, թե քիչ ժամանակից հետ պիտի բաժանվիմ աշխարհից և դադարեմ այլևս տանջվելուց ³⁶»:

Ձեռքերը արյունով շաղախել (սպանել, ոճիր գործել)//**աշխարհի երեսից նրան վերցնել** (սպանել...) «Լա՛վ, այժմ ինձ ասա՛՜ եթե թագավորը կամենում էր հաշտվել ինձ հետ, եթե նա փախուստ էր տալիս արյունահեղությունից, ինչո՞ւ ուրեմն շաղախեց յուր ձեռքերը արյունով հենց այն ժամանակ, երբ այլևս ոչ մի տեղից վտանգ չէր սպառ նում նրան³⁷»:

«Իմ և քո թագավորը, բարեկա՛մ ...: Ես պետք է միանգամայն վերցնեի նրան աշխարհի երեսից. այդպիսով գայթակղության քարը վերցված կլիներ մեջտեղից³⁸»:

Հականիշ դարձվածքներ

Բախտը ինձանից յուր երեսը դարձուց (անհաջողության մեջ ընկնել, գործերն անհաջող ընթացքով գնալ)//**բախտի անիվը դառնալ**//**բախտը երես դարձնել** (մինչ այդ

³² Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 96

³³ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 355

³⁵ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 268

³⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 261

³⁷ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 90

³⁸ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 84

հաջող գնացած գործերը վատանալ): «Բեշիրը պատրաստվում էր բանակը վերցնել և հեռանալ, երբ մի դժբախտ ու անակնկալ դեպք հայոց **բախտի անիվը դարձուց**³⁹»: **Բախտը ժպտալ** (մեկի գործերը հաջողվել, հաջողության հանդիպել, երազները իրականանալ, բախտը բերել): «Հիշում էր, թե ինչպես **ժպտում էր նրա բախտը**, թե ինչպես ինքը հրճվում էր յուր սրտում՝ գուշակելով, թե աստված նրան է վիճակել հայրենիքի փրկիչ լինելու, օտարի նախատինքը բառնալու և հայրենական գահի նախկին փառքը վերադարձնելու գերագույն կոչումը⁴⁰»:

Միրտը սասանել (սաստիկ ցնցել, վրդովել, հուզել): «Մեղա՛, դու արդեն գիտես, թե ինչ վտանգ է սպառնում իմ դստեր ընտանեկան երջանկությանը: Գնա՛ և պատասպարի՛ր քո Սահանույշը վերահաս վտանգներից: Թագավորի **սիրտը սասանած է** արդեն. այդ ես հաստատ տեսա. աշխատի՛ր, որ իմ դուստրը վերջին հարվածը չտա...⁴¹»: **Միրտը չպղտորել** (չհուզել, չխռովել, տրամադրությունը չգցել): «Թող կասկածները **սիրտդ չպղտորեն**, սիրելի՛ իշխան»:

Հաշտության ձեռք պարզել (փորձել հաշտվել, չկռվել): «Եթե նա իմանա, թե դու հաշտության ձեռք ես պարզում իրան, նա ուրախությամբ յուր աթոռանիստը կվերադառնա⁴²»: **Սուրը մերկացնել/սուր կախել գլխին/սուրը պատյանից հանել** (սուր բարձրացնել, կռվի դուրս գալ, պատերազմ հայտարարել): «Մի՛ վախենար, Վեհափա՛ռ հայր. ես թույլ չեմ տալ, որ ոստիկանը յուր **սուրը մերկացնե**, ուր մնաց թե կախե քո գլխին⁴³»:

Բերանը դուռ չունենալ (բերանը փակել չկարողանալ, անգաղտնապահ լինել): «Մենք այնպես մտերմացել ենք, քո՛ւյր Սեդա, որ ես ազատ կարող եմ իմ մի քանի կարծիքները հայտնել քեզ,- ասաց իշխանը (Գ. Մարգարետունին) ժպտալով,- կանայք պինդ պահում են միմիայն իրանց սիրային գաղտնիքները, իսկ մնացյալի համար նրանց բերանը դուռ չունի⁴⁴»: **Գաղտնիքը սրտի մեջ մեռնել** (մինչև մահ գաղտնա պահ մնալ) : «Այժմ կհաղորդեմ քեզ այն գաղտնիքը, որ հայտնի է միայն ինձ՝ իբրև արքայորդու մտերմին ու նիզակակցին, և հուսով եմ, որ այդ գաղտնիքը քո սրտի մեջ էլ կմեռնի⁴⁵» :

Ծաղիկ հասակ (մարդու կյանքի ծաղկուն շրջանը, այստեղ՝ երիտասարդություն): «Իմ հայրն ու սիրելի եղբայրը աչքերի լույսից չէին զրկվիլ, և ես շարունակ գաղտնի հառաչանքներով, թաքուն արտասուքներով չէի ողբալ մեկի ծերությունը և մյուսի **ծաղիկ**

⁴¹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 60

⁴² Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 260

⁴³ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 254

⁴⁴⁻⁵² Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 32-33

հասակը⁴⁶»: **Կյանքի երեկո** (մարդու կյանքի վերջին շրջանը, խոր ծերություն):« Անցան դարձյալ մի քանի խաղաղ տարիներ, և «Հայրենյաց բարերարը» օրըստօրե խոնարհեց դեպի յուր կյանքի երեկոն⁴⁷»:

2.2 Պատկերավորումը դարձվածքներում

Անվիճելի է, որ պատկերավոր մտածողությունը ի բնե հատուկ է եղել մարդուն. պատկերավորումը նրա մտածողության ամենաստվորական ու բնական հնարներից է: Ինչպես գիտենք, դարձվածքն ստացվում է կապակցության մեջ բառերի վերախմաստավորումից, ապա «պատկերավորումն ինքը հենց բառերի վերախմաստավորումն է»⁴⁸: Գրողը իր վեպում կիրառել է դարձվածքներ, որոնք ոչ միայն պատկերավոր ու տպավորիչ են դարձնում խոսքը, այլև ազգային երանգավորում են հաղորդում և՛ հեղինակի, և՛ կերպարների խոսքին, բացահայտում նրանցից յուրաքանչյուրին բնորոշ լեզվամտածողությունը:

Կիրառելով **խաղալիք լինել բնության ձեռքում** (ճակատագրորեն նախասահմանված, կանխորոշված բնական հակում, մղում, որի դեմ անգոր է մահկանացուն) դարձվածքը՝ հեղինակը ցանկանում է պատկերավոր ու հակիրճ կերպով ցույց տալ, որ բնական թուլությունը մահկանացուի համար է սահմանված, բայց այն, ինչ սահմանված է, դեռևս իրավունք չէ. թուլությունը ինքնին մոլորություն է, իսկ մոլորությունը՝ չարիքի նախապատճառ:

«Մենք, սիրելի՛ բարեկամ, թշվառ **խաղալիքներ ենք բնության** հզոր **ձեռքում...** իզուր են մարդիկ օրենքներ դնում և կարգեր սահմանում՝ կառավարելու համար այն, ինչ որ ինքը բությունը պիտի կառավարե և որի միահեծան տիրապետն է... մարդկային սրտերի մասին է խոսքս...»:

«Ով կոչված է առաջնորդ լինելու և ժողովրդի պահապան, իրավունք չունի ենթարկվելու անցողիկ կրքերի թուլությանը» միտքը արտահայտելու համար վիպա սանը օգտագործում է **ճանապարհ բերել մոլորյալին** (դաստիարակել, խրատել, սթափեցնել) դարձվածքը: «Այլ երկրորդ անգամ ապստամբության դրոշ պարզեցի՝ հեռատեսությամբ որոշելով, թե այս անգամ մի փոքր ավելի խստությամբ կվարվեմ արքունական կալվածների և ժողովրդի հետ, գուցե դրանով կարողանամ ազդել

⁴⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 22

⁴⁷ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 354

⁴⁸ Տե՛ս Պ. Մ. Բեդիրյան «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն» Երևան, 1973, էջ 99

թագավորի քարացած սրտի վրա, **Ճանապարհ բերեմ մոլորյալին** և ազատեմ գահը վերահաս վտանգից⁴⁹»:

Հեղինակը հայրենասիրության գաղափարը փորձում էր հայտնաբերել մարդկային հոգեբանական բարդ հանգույցներում՝ իբրև սկիզբ ընդունելով ներքին մարդը, մարդ-անձնավորությունը: Անարգված է թագուհու սերը, փշրված՝ կանացի հպարտության սափորը: Այստեղ ևս հեղինակը ձգտել է դիպուկ դարձվածքներ գործածելով նպաստել հերոսուհու ներքին և արտաքին կերպավորմանը և հոգեկան ապրումների ընդգծմանը:

Բախտի կամքին թողնել (անտարբերության մատնել): «Մանավանդ թագավորի Կաքավաբերդ քաշվիլը և երկիրը **Բախտի կամքին թողնելը** նրան (թագուհուն) ավելի վհատեցրեց⁵⁰»:

Կտրտիլ սիրտը (վշտացնել, տանջել, մորմոքեցնել, խոր հուզել, ցնցել): «Իսկ թափվող արյունը, թավալող դիակները, մեռնողների անեծքը, վիրավորների հառաչանքը **չէ՞ն կտրտիլ քո սիրտը**⁵¹»:

Թունդ հանել սիրտը (հուզել, բորբոքել): «Ի՞նչ լուր կբերե ինձ արդյոք իշխանը...», - մտածում էր նա, և այս մտածմունքը **թունդ էր հանում** նրա (թագուհու) սիրտը⁵²:

Լուսինը խոնարհել (այգը բացվել, լուսանալ): «Գնա՛նք, լուսինն արդեն խոնարհում է,- ասաց թագավորը խրոխտ ձայնով⁵³»:

Մուրացանը գեղագետի նուրբ ու խորաթափանց զգացողությամբ է ներկայացնում թագուհու հույզերը, նրա հոգեկան աշխարհը բացում հատկապես դայակի հետ ունեցած զրույցների ժամանակ՝ ընտրելով այնպիսի դարձվածքներ, որոնք առավել տեսանելի ու պատկերավոր են դարձնում խոսքը:

Բաժակն արդեն լցվել է (համբերությունը հատնել): «Բայց հետո մտածելով, որ **բաժակն արդեն լցվել է**, և որ այսուհետև գաղտնի կերպով տանջվելը ոչ մի օգուտ չի բերելու իրան, հարցրեց հանկարծ դայակին.

- Սեղա՛, դու ի՞նչ գիտես Ուտիքի մասին⁵⁴»:

Աչքերի լույսից զրկվել (կուրանալ, կորցնել տեսողությունը): «Իմ հայրն ու սիրելի եղբայրը **աչքերի լույսից չէին զրկվիլ**, և ես շարունակ գաղտնի հառաչանքներով, թաքուն արտասուքներով չէի ողբալ մեկի ծերությունը և մյուսի **ծաղիկ հասակը**⁵⁵»:

⁴⁹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 89

⁵⁰ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 167

⁵¹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 114

⁵² Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 153

⁵³ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 216

⁵⁴ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 106

⁵⁵ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 74

Խելքը թռչել (խելքից, բանականությունից զրկվել, խելագարվել, ցնորվել): «Եվ այս բոլորը մի անզգամի, մի նվաստագգի կնոջ համար...Օ՛հ, **խելքս թռչում է**, երբ սկսում եմ մտածել...»⁵⁶:

Ձյուն բերել հորս գլխին (դժբախտացնել, աղետի, թշվառության մեջ գցել): «Բայց եթե կարողանար գուշակել, թե իշխանականից բարձր կոչում ունեցող այդ փեսացուն ի՞նչ **ձյուն պիտի բերեր** յուր, իսեղճ **հորս գլխին**⁵⁷»:

Աչքերը կրակ թափել (1. կիրք արտահայտել 2. բարկություն, զայրույթ արտահայտել): «Նրա (Շահանդուխտի) գեղանի **աչքերը կրակ էին թափում**, կարմրավար շուրթերը դեռ դողում էին (այստեղ՝ հայրենասիրության կիրք)⁵⁸»:

Գրողը անակնկալ արգելքի հանդիպել իմաստով է օգտագործում **խտիր քարին առնել** դիպուկ դարձվածքը, երբ Աբաս արքաեղբայրը իր աներոջ՝ Գուրգենի հետ զորքով դիմում է Երազգավորս և կամենում բռնել կամ սպանել եղբորը՝ Աշոտ Երկաթ արքային, որը նախօրոք տեղեկացել էր դավադրության մասին և իր ընտանիքով հեռացել Ուտիք: «Դավադիրները եկան և իրանց **«խտիր քարին առած»** տեսնելով՝ Երազ գավորսը ավարի առան և հեռացան⁵⁹»:

Հայրենիքի բարերարին բնութագրող որոշ դարձվածքներ հուզաարտահայտչական հարուստ երանգ ունեն և դրսևորում են հեղինակի որոշակի վերաբերմունքը իշխան Մարգալետունու նկատմամբ: Մարդկայնորեն գրավիչ են նրա խոհերը ճակատամարտից (Գեղա ամրոցի վրա հարձակվելուց) առաջ մահվանն ընդառաջ գնացող միամորիկ որդու՝ Գոռի մասին: Այս դեպքում Մուրացանն օգտագործում է պատկերավոր դարձվածքներ:

Տան ճրագը խավարեցնել (միակ հույսը, ապավենը մարել, արու գավակի գոյությունը վտանգել): «Ինչո՞ւ կամեցա Մարգալետունյաց **տան** վերջին **ճրագը խավարեցնել**⁶⁰»:

Հայրենյաց բարերարը հայրենական պարտքի գիտակցությամբ գերադասում է ճակատագրի վճռին հանձնել փառքի ու անմահության բարձրագույն պարգևը:

Մարտիրոսական պսակ ստանալ (մարտիրոսվել, նահատակվել, զոհվել): «Ինչո՞ւ

⁵⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 22

⁵⁷ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 26

⁵⁸ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 202

⁵⁹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 85

⁶⁰ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 224

Չցանկանալ, որ անփառունակ մահվան փոխարեն նա (Գոռը) **մարտիրոսական պսակը ստանա**. Ինչո՞ւ չմխիթարվել այն քաղցր մտքով, թե աշխարհի մեջ ունեցածս ամենաթանկագին հարստությունը իմ հայրենիքի ազատությանը նվիրեցի...⁶¹»:

Գևորգ Մարգալետունին այն անձնագրի անհատն է, որի համար սրբություններ են հայրենիքն ու ընտանիքը: Նա Մուրացանի գաղափարախոսն է, այնուամենայնիվ այդ կերպարը զարգանում է տիպական հանգամանքներում, և նրա բոլոր արարքները հավաստի տպավորություն են թողնում:

Մահու և կյանքի խնդիր (նույնն է կյանքի ու մահի խնդիր): «Եվ որովհետև Դվն առումն ու հագարացոց հալածելը **մահու և կյանքի խնդիր** էր դաժած Մարգալետունու համար, ուստի նա չէր կամենում հյուսիսային նահանգները թողնել մի ուրիշ թշնամու ձեռքը... երբ իրանք զբաղված կլինեին հագարացիների հետ կռվելով⁶²»:

Հերոսների տվյալ պահի տրամադրությունը բնորոշող որոշ դարձվածքներ պարզապես անփոխարինելի են խոսքային համապատասխան կիրառություններում:

Այս դեպքում հեղինակը գործածում է **թև ու թիկունք լինել** (սատարել, օգտակար լինել, պաշտպանել, նեցուկ լինել) դարձվածքը: «Բոլոր իշխաններին այցելեցինք, ամենքին խնդրեցինք, որ միանան և **թև ու թիկունք լինեն** արքային, պաշտպան՝ հայրենիքին ու գահին, բայց ոչ ոք մեզ լսեց, և ոչ ոք մեր խնդիրը հարգեց⁶³»:

Մեկ այլ դեպքում հեղինակը կիրառում է **հոգու աչքեր** (հոգվո աչքեր) /ներգագողություն/ դարձվածքը: «Եթե մինչև անգամ զուրկ լինեի այդ պիտանի զգայարանքից՝ աչքերից, այնուամենայնիվ կարող էի դարձյալ իմ **հոգվո աչքերով** գտնել այն ճանապարհը, որ հանում է դեպի Գարդմանա իմաստուն և հայրենասեր իշխանի դղյակը», - պատասխանում է Գ.Մարգալետունին⁶⁴:

Արևի լույսից զրկված երբեմնի հզոր մարդու ողբերգությունն ընդգծելու համար գրողը կիրառում է առավել համապատասխան **հավիտյան գերեզմանի մեջ խաբխա փել** (զրկված լինել արևի լույսը տեսնելու կարողությունից) դարձվածքը: Ի՞նչ էր մտածում Աշոտ Երկաթը, որ կուրացնում էր Սևադային: «Ի՞նչ չարիք էի հասցրել նրան... Ինչո՞ւ ինձ դատապարտեց **կենդանի մարմնով հավիտյան գերեզմանի մեջ խաբխափել**⁶⁵»:

Հայոց արքային դիպուկ ու պատկերավոր բնութագրող **առյուծի սիրտ** ժողովրդական դարձվածքն է կիրառել հեղինակը՝ դրսևորելով որոշակի վերաբերմունք

⁶¹ Տե՛ս Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 22

⁶² Տե՛ս Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 294

⁶³ Տե՛ս Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 196

⁶⁴ Տե՛ս Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 78

⁶⁵ Տե՛ս Մուրացանի «Գևորգ Մարգալետունի» Երևան «Լույս» 1989, էջ 79

Աշոտ Երկաթի նկատմամբ. անվեհեր արքան երբեք չի ընկրկի այն հազարացու առաջ, ով Գևորգ իշխանի կողմից պարտվելուց հետո ցանկանում էր վրեժ լուծել՝ հայոց թագավորին անակնկալի բերելով:

Առյուծի սիրտ (քաջություն, խիզախություն, անվեհերություն): «Այժմ իմ պարտականությունն է հասկացնել նրան, որ առյուծը գառագդի (փխբ.՝ որոգայթ) մեջ էլ **առյուծի սիրտ** է կրում⁶⁶» :

Ինչպես հայտնի է, խոսքային միջավայրից է կախված դարձվածքի իմաստի պահպանումը: Մուրացանի մոտ նման դարձվածքներ շատ են հանդիպում: **Հավերքը խոսել էին** (ըստ սնոտիապաշտության՝ չարագուշակություններ անել, այստեղ՝ ուշ գիշեր):

«Գիշերից բավական անցել էր, **հավերքը խոսել էին** վաղուց: Սեդան սպասում էր, որ թագուհին, յուր պատմություններից հոգնած, կպառկե վերջապես հանգստանալու և իրան էլ կհրամայե հեռանալ⁶⁷»:

Մի աչք, մի շունչ, մի հոգի դառնալ ուշադրությունը կենտրոնացնել, խիստ լարվել/:

«Ամբողջ Դվինը **մի աչք, մի շունչ, մի հոգի դարձած**՝ յուր թագավորի ելնելուն էր սպասում⁶⁸»:

Մուրացանը վեպում գործածել է նաև առածներ, ասացվածքներ, թևավոր խոսքեր, որոնք խոսքի մեջ հանդես են գալիս իբրև լեզվի իմաստային պատրաստի միավորներ(լայն իմաստով դարձվածքային միավորներ են նաև առածը, ասացվածքը, անեծքը⁶⁹):

«Զգուրն, զոր փորեաց և պեղեաց՝ ի նոյն անկցի ի խորխորատ, զոր և գործեաց»: «Եվ այդպես, ուրեմն, Սահակ Սևադան ինքը յուր ձեռքով սեփական տունը քանդեց. ահա սրա համար է ասել մարգարեն⁷⁰»:

Զուգություն է մայր բարեաց, անգուգություն՝ ծնող չարեաց... (այստեղ՝ միաբանություն, համերաշխություն): Լավ չէ, որ մենք առհասարակ չենք հետևում մեր փորձված պապերի խրատներին....Այդ խրատներից մինն այն է, որ ասում է. «Զուգություն է մայր բարեաց, անգուգություն՝ ծնող չարեաց⁷¹»:

Թևավոր խոսքի արժեք են ձեռք բերել **«Մի դալար բողբոջ չորացած ծառի մոտ», «Մի ծաղկով գարուն», «Ջրից փախչողը՝ կրակի մեջ», «Կույր աչքը կներե, կույր սիրտը չի**

⁶⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս»1989, էջ 235

⁶⁸ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս»1989, էջ 43

⁶⁹ Յու. Ավետիսյան «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Երևան 2014

⁷⁰ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս»1989, էջ 36

⁷¹ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգպետունի» Երևան «Լույս»1989, էջ 93

ներիլ» արտահայտությունները, որոնք ավելի արտահայտիչ են դարձնում հերոսների հոգեվիճակներն ու վեպում արտահայտված գաղափարները:

Ինքնատիպ ու նորաստեղծ են, մեր կարծիքով, **«հարվածը չկշռել»**, **«ընկճել բախտի կամակորությունը»**, **«հույսը պարապ լինել»**, **«սրտի վարագույրը բանալ»**, **«ո՛չ փշից խաղող կքաղվի, ո՛չ տատասկից՝ թուզ»** և **«օձը միշտ պիտի խայթե, քանի մականը չէ ջախջախել նրա գլուխը»** լեզվական պատրաստի կառույցները, որոնք չեն հանդիպել ո՛չ առկա դարձվածաբանական բառարաններում, ո՛չ էլ որևէ հեղինակի մոտ:

«Հարված չկշռել» (չհարվածել): «Ամեն ոք աշխատում էր յուր անձը փրկել...ամենքը, թեպետ սրերը մերկացրած, բայց գրեթե ոչ ոք **հարված չէր կշռում**, այլ վահանը գլխին բռնած՝ հարվածներից ազատվիլ էր աշխատում⁷²»:

«Ընկճել բախտի կամակորությունը» (փոխել ճակատագրորեն սահմանվածը) : «Վշտերի մասին հիշել ու տխրելն ավելորդ է այլևս, մեծափա՛ն տիկին. ով որ կարողանում է արիաբար համբերել, նա էլ ընկճում է բախտի կամակորությունը: Անցյալն անդարձ է, այժմ ապագայի մասին պիտի հոգանք⁷³»:

«Հույսը պարապ լինել» (հույսը չարդարանալ): «Բայց իմ հույսը պարապ էլավ. դու չկամեցար թողնել ինձ իմ վշտերի հետ, դու հետևեցիր ինձ իբրև ամուսնասեր կին...»⁷⁴:

«Սրտի վարագույրը բանալ» (անկեղծանալ): «Խոսի՛ր, եթե դեռ մի ուրիշ ցավ ունիս, բա՛ց արա իմ առաջ սրտիդ վարագույրը⁷⁵»:

Ո՛չ փշից խաղող կքաղվի, ո՛չ տատասկից՝ թուզ (բարիք սպասել անկարելի է նրանցից, ովքեր միայն իրենց շահն են հետապնդում՝ մոռացած հայրենիքի միասնությունն ու անվտանգությունը): «...Գազիկ Արծրունին էլ հազարացիների հետ էր միացել՝ Բագրատունյաց հարստությունը ջնջելու հուսով. և այդ միայն նրա համար, որ Սմբատ թագավորը մերժել էր նրա ապօրինի խնդիրը, այսինքն՝ Նախիջևանը չէր տվել իրան, որ Սյունյաց Սմբատ իշխանի հայրենական կալվածքն էր... Չպետք է զարմանալ և վրդովվել, որովհետև **ո՛չ փշից խաղող կքաղվի, ո՛չ տատասկից՝ թուզ**⁷⁶»:

Օձը միշտ պիտի խայթե, քանի մականը չէ ջախջախել նրա գլուխը (դավաճանից միշտ դավ ու նենգություն է սպասվում, քանի դեռ չի ջախջախվել, վերացվել):

⁷³ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 156

⁷⁴ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 214

⁷⁵ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ 21

⁷⁶ Տե՛ս Մուրացան «Գևորգ Մարգարետունի» Երևան «Լույս» 1989, էջ

«Կհեռանանք հենց այսօր,- պատասխանեց Աբասը,- միայն թե ժամանա՛կ տուր ինձ
ձերբակալել դավաճանին (Աշոտ Բռնավորին), որովհետև **օձը միշտ պիտի խայթե,
քանի մականը չէ ջախջախել նրա գլուխը...**⁷⁷»:

⁷⁷ Տե՛ս Մուրացան «Գեորգ Մարգպետունի» Երևան «Լույս» 1989, էջ 306

Եզրակացություն

Դարձվածքների լավագույն շտեմարան է Մուրացանի «Գևորգ Մարգարետունի» պատմավեպը:

Անվանի պատմավիպասանը վերոնշյալ երկում հաճախ է օգտվել խոսքը ոճավորելու անփոխարինելի միջոցներից՝ դարձվածքներից՝ իր ասելիքը ավելի պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու նպատակով: Նա մեծ հմտությամբ և ճաշակով է կիրառել դարձվածքների գործածության գրեթե բոլոր ձևերը՝ դրանց միջոցով հասնելով խոսքի պատկերավորման մի նոր աստիճանի, խոսքի հակիրճության և հուզականության ստեղծմանը, ինչպես նաև ոճի բազմազանությանը: Այս ուսումնասիրությունը կնպաստի սովորողների՝ գրական երկը ընթերցելու, լեզվա ոճական առանձնահատկությունների վերլուծություն կատարելու, պատկերավոր խոսք կառուցելու կարողությունների և հմտությունների զարգացմանը:

Օգտագործված գրականություն

1. Մուրացան «Գևորգ Մարգարետունի» պատմավեպը, Երևան «Լույս» 1989
2. Պ. Բեդիրյան «Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն», Երևան 1973
3. Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան», Երևան, 1975
4. Յու. Ավետիսյան «Հայոց լեզու և խոսքի մշակույթ», Երևան 2014
5. Լ. Եզեկյան «Ոճագիտություն», Երևան 2003